ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1957 Общественные науки

Հ. Ղազարյան

Մ. ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 1860—1870-ԱԿԱՆ ԹԹ.

Քննության առնելով արևմտահայ դեմոկրատ Մ. Մամուրյանի հասարակական-քաղաքական հայացքները, մենք բնավ հավակնություն չունենք կարծելու, թե սույն հոդվածով սպառիչ բնութագրում տված կլինենք հակասություններով լի մի հրապարակախոսի գործունեությանը, որը սկսվելով 1860-ական թվականներից, անցել է զարգացման տարբեր աստիճաններ, կատարելով զիգզագներ՝ մերթ առաջընթաց, մերթ հետընթաց՝ ազատագրական շարժման ընդհանուր հորձանքի մեջ։

Մեր նպատակն է ծանոթացնել հրապարակախոսի առաջին շրջանի՝ 1860-ական թվականների գործունեությանը, որը անխզելիորեն կապված է արևմտահայ առաջադիմական այն գրողների ու հրապարակախոսների անունների հետ, որոնք համախմբվելով «Մեղու», «Մյունատի», «Մաղիկ» պարբերականների շուրջը, սկզբունքային պայքար են ծավալել ռեակցիոն և պահպանողական գաղափարախոսության դեմ, կատարել են կրթական ու լուսավորական խոշոր աշխատանք և իրենց արժանավոր տեղն ունեն ինչպես հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ, այնպես էլ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության տարածման գործում։

Մատթեոս Մամուրյանը ինքնատիպ մտածող է։ Ժամանակի ռադիկալ դեմոկրատ գործիչներ՝ Հ. Սվաճյանի, Կ. Փանոսյանի և այլոց նման նա իրեն ազատակամ նվիրել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի գործին։ Հայ ժողովրդի ազատագրման գործում նա կոչ էր անում համախմբվել և սեփական ուժերով, կազմակերպված պայքարի դուրս գալ սուլթանիզմի դեմ։

Մամուրյանը հրաժարվում էր եվրոպական մեծ պետությունների օգնությունից, քննադատում նրանց կեղծ քաղաքականությունը, որոնք արտաքուստ ցույց էին տալիս, թե ժողովուրդների ազատագրմանը օգնում են, մինչդեռ իրականում դեմ էին ամեն մի ազատագրական ու ռևոլյուցիոն շարժմանը։

«Մեծ պետությանց մեջ, —գրում է Մամուրյանը,— ազգերը դեռ իրենց ճակատագրին տերը չեն և կնճռոտ քաղաքականության մը ծուղակն ընկած են։ Այս քաղաքականությունը հանրազգային իրավանց, ճնշյալ ժողովրդոց պաշտպանության և ազատության, հարստահարությանց բարձման խոշոր, խոշոր բառերով ասպարեզ կիջնե... մեկ ձեռնով խաղաղության ձիթենիի ոստ բռնած է, մյուս ձեռնով դյուրավառ խնդիրներու վրա վառոդ կցանե...։ Այստեղ կարձակե ստրուկը, այնտեղ զանի կկապե ու կկեղեքե, տեղ մը ազատություն կբաշխե, ուրիշ տեղ շղթաներ կդարբնե, վասն զի ժողովուրդները դեռ իրենց ճշմարիտ շահուց անտեղյակ են, թույլ կտան, որ կառավարությունները զիրենք պատրեն և իրենց անվամբ անիրավություն և բռնություն գործեն։ Եվրոպա իր բնական կայանը դեռ չգտավ...»[1]։

[1] «Արևելյան մամուլ», հունվար, 1876, էջ 28։

Բեռլինի, 1878 թ. կոնգրեսի, հայկական հարցի զարգացման շրջանում Մամուրյանը չկարողացավ հասկանալ այդ հարցի զարգացման ներքին ու արտաքին շարժառիթները, ուստի և ի վիճակի չեղավ ճիշտ ուղիներ նշել նրա լուծման համար։

1870-ական թվականների վերջերից Մամուրյանի մոտ հանդես է գալիս անհետևողականություն և որոշակի նահանջ դեմոկրատական դիրքերից, սակայն այդ բնավ չի նսեմացնում առաջին շրջանում նրա կատարած դրական գործունեությունը, որը ծառայեցվում էր ժողովրդի ազատագրման ու բարօրության գործին, և դրանով իսկ հրապարակախոսի համար իրավունք նվաճում դասվելու արևմտահայ դեմոկրատների շարքերում։

* * *

Մատթևոս Մամուրյանը ծնվել է 1830 թ. Զմյուռնիայում։ Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում՝ Մեսրոպյան վարժարանում։ Ավարտելով վարժարանը, մի խումբ աշակերտների հետ, մեկնել է Փարիզ, սովորել ու ավարտել Մուրատյան վարժարանը՝ 1850 թ.։

Ավարտելով Մուրատյան վարժարանը, Մամուրյանը վերադառնում է Զմյուռնիա և որպես ուսուցիչ պաշտոնավարում Մեսրոպյան վարժարանում։ Նրա հետաքրքրության շրջանակները գնալով լայնանում են։ Եվրոպական կրթության տեր ապագա հրապարակախոսը, պոլսահայ ամիրա Մկրտիչ Ճիզրաելյանի առևտրական գործը կարգավորելու պատրվակով մեկնում է Անգլիա և ունկնդրում Քեմբրիջի համալսարանի դասախոսությունները։ Լոնդոնում երկու տարի մնալով հրապարակախոսը ծանոթանում է Բայրոնի, Ռոբերտ Օուենի և այլ հեղինակների ստեղծագործություններին։

1858 թ. Լոնդոնում եղած ժամանակ Մամուրյանը սկսում է շարադրել նամակագրական բնույթ կրող, սիրավիպային արտաքինով քողարկված, բայց իր քաղաքական հայացքների կրեդոն հանդիսացող «Անգղիական նամականի» աշխատությունը, որի առանձին կտորները սկզբում տպագրվեցին «Մաղիկ», «Կիլիկիա» և «Կռունկ Հայոց աշխարհին» պարբերականներում։

Նա մասնակցում է Պոլսում մղվող սահմանադրական պայքարին և դառնում 1860 թ. հիմնադրված «Բարեգործական ընկերության» անդամ։ Մամուրյանը 1861—65 թթ. Պոլսի պատրիարքարանում դիվանապետի պաշտոն է վարում։ 1865 թ., հոր մահվան պատճառով մեկնում է Զմյուռնիա, ապա 1866 թ. վերադառնալով Պոլիս, իր գործերը հանձնում է և իսպառ հեռանում Պոլսից։

1866—1901 թթ. նա վարել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում տնօրենի, տարբեր վարժարաններում ուսուցչի պաշտոններ, միաժամանակ զբաղվելով հրապարակախոսությամբ ու թարգմանություններով։ 1870—1901 թթ. խմբագրել է «Արևելյան մամուլ» պարբերականը։

Մամուրյանը թողել է թարգմանական և ինքնուրույն բազմաթիվ գործեր։ Նրա արժեքավոր աշխատություններն են «Հայկական նամականի», «Անգղիական նամականի կամ հայու մը ճակատագիրը», «Պատմություն ընդհանուր հին և միջին դարերուն», «Սև լեռին մարդը»։ Բացի դրանից գրել է «Վեպեր ու դասեր տղայոց համար», «Բանալի հայերեն շարադրության», «Նոր ընթերցարան տղայոց համար», «Մանր վեպեր», «Համառոտ պատմություն հայոց մինչև մեր օրերը», որոնք դիտական կամ գրական մեծ արժեք չեն ներկայացնում, բայց և այնպես խոշոր դեր են խաղացել ազգի մեջ լուսավորություն և կրթություն

տարածելու գործում։ Այդ գործերից շատերը երկար ժամանակ կատարել են ձեռնարկների գեր։

Նա թարգմանել է «Առողջապահություն աղջկանց համար», «Իրավաբանություն», «Հիշատակ սիպերեականի մը», «Առողջաբանության տարերք», «Հազար ու մի գիշերներ», Էժեն Սյուի, Ժյուլ Վեռնի, Գյոթեի, Շանֆլեորի, Բոմարշեի, Վոլտերի, Ա. Դյումայի, Մերվելի և այլոց մի շարք երկերը[1]։

Մամուրյանը պատկանում էր «Բարեգործական»-ի այն անդամների թվին, որոնք մտահոգվում էին երկրում՝ բուն Արևմտյան Հայաստանում երկրագործության զարգացման գործով։ Սակայն նրա ծրագրերը չէին սահմանափակվում միայն Կիլիկիայով, ինչպես Ծերենցի և «Բարեգործական»-ի մյուս անդամների, կամ Արևմտյան Հայաստանով, այլ վերաբերում էին նաև «Այրարատյան նահանգին», Կովկասյան Հայաստանին։ Մամուրյանը գիտակցում էր, որ «Մարդկային երջանկությունը նյութական միջոցներով կարելի է ապահովել»[2], իսկ նյութական միջոցներ հայթայթվում են երկրագործությամբ, որն «...ամեն հարստության զարգացման կեդրոնն ու պայմանն»[3] է։

Մամուրյանը երկրագործության զարգացման համար պահանջում էր ազգի հարստությունը կենտրոնացնել բուն Հայաստանում և այն օգտագործել ոչ թե օտար երկրներ ծաղկեցնելու համար, այլ Հայաստանի ծաղկման ու բարգավաճման համար։

Երկրագործությունից բացի հրապարակախոսը պահանջում էր զարկ տալ ազգային վաճառականությանը։ Ի տարբերություն կոմպրադորական բուրժուազիայի իդեոլոգների, Մամուրյանը պահանջում էր ստեղծել «կանոնավոր վաճառականություն», որի զարգացման համար անհրաժեշտ էր լուսավորություն, առևտրական ու տնտեսական գիտություն, հատկապես մեքենայական արտադրություն։

Տեսնելով կապիտալիզմի զարգացման փաստը Եվրոպայում և նրա աստիճանական ներթափանցումը Թուրքիա, Մամուրյանը պայքարում էր, որպեսզի հայ ազգը կանգնի կապիտալիզմի զարգացման ուղու վրա, ապահովի նրա անկախությունն օտար կապիտալից. «...և եթե հանկարծ անիվ և շոգի գործածվին այստեղ, այն ժամանակ պիտի անգործ մեռնին և կամ ուրիշ գործոց պարապին. իսկ իրենց դրամագլուխը, որ է իրենց պնդակազմ կռնակը կամ կորովի ձեռները, շատ բանի չեն ծառայեր քաղաքակիրթ ազգաց մեջ»[4],— գրում է Մամուրյանը։

Մամուրյանը նշավակում էր արևմտահայ կոմպրադորական բուրժուազիային, որը հաջողություններ ձեռք բերելով Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի առևտրական շուկաներում, երկրի ներքին կյանքի զարգացման մասին չէր մտածում։

Նա պահանջում էր երկրի ներսում ստեղծել գործարաններ, առևտրական ընկերություններ, սեղանատներ և զարկ տալ ազգային վաճառականությանը՝ առևտրին ու արհեստագործությանը, մանավանդ որ ենիչերիների վերացումից և թանզիմաթի օրենքներից հետո Թուրքիայում որոշ պայմաններ էին ստեղծվել ազատ առևտրի զարգացման համար։

---

[1] «Բազմավեպ», 17 հոկտեմբերի, 1899, էջ 493 (գրված Մ. Մամուրյանի 50-ամյա հոբելյանի առթիվ)։

[2] Մ. Մամուրյան, Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1880։

[3] «Կռունկ հայոց աշխարհին», 1860, էջ 422։

[4] Անգլիական նամականի, էջ 157։

Մամուրյանը խորհուրդ էր տալիս տնտեսությունը կապիտալիստական հարաբերությունների զարգացման ուղիներով տանելու համար օգտագործել եվրոպական առաջավոր տնտեսագետներ Ադամ Սմիթի, Սեյի և այլոց տնտեսագիտական ուսմունքները։

Արևմտյան Հայաստանում կառուցվելիք գործարանները հեղաշրջում կմտցնեին ոչ միայն երկրի տնտեսական կյանքում և նրա հետ կապված հասարակական հարաբերությունների մեջ, այլև մարդկանց բուն իսկ գիտակցության մեջ։

«Բարեկամ մեքենականություն, այս է մեր դարուն նշանաբանը, կը գրե անվանի հեղինակ մը, որու գրած տպավորությունը իմ վրա պիտի հաղորդեմ քեզ։ Աչքդ որ կողմը դարձնես ուրիշ բան չես տեսներ հիմակ՝ այլ միայն մեքենաներ Հեռուները պտտելու տեղ՝ մեր չորս դին նայինք, մեր ժամանակին պիտույքն ու ձգտումները քննենք, թերևս դաս մը քաղենք... Սահման չունի մեքենագիտությունն, և ով գիտե ապագային մեջ ինչ նոր նոր հորիզոններ պիտի բանա մարդուս առջև»[2], ավելացնում է. «Ուրեմն մեքենան մեր կենաց բոլոր պայմանները կփոխե, ոչ միայն մեր գործելու եղանակն, այլև մեր միտքն ու զգացմունքը»[3]։

Մամուրյանը ճիշտ էր հասկացել բուրժուական հարաբերությունների, մեքենայական արտադրության պրոգրեսիվ նշանակությունը երկրի էկոնոմիկայի զարգացման բնագավառում։ Սակայն նա սոսկ չէր գովաբանում կապիտալիզմը։ Նա ցույց էր տալիս կապիտալիզմի՝ մարդկությանը, հատկապես արևմտահայությանը հասցրած աղետներն ու չարիքները։ Արտահայտելով ժողովրդի շահերը, Մամուրյանը խիստ քննադատության ենթարկեց կապիտալիզմի բացասական կողմերը, ցույց տվեց եվրոպական քաղաքակրթության իսկական էությունը։

Մամուրյանը կարողացավ նկատել, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը դասակարգային շերտավորումն ավելի է խորացնում։ Անհավասար բաշխման հետևանքով հարստությունը կենտրոնանում է փոքր թվով մարդկանց ձեռքին, իսկ միլիոնավոր աշխատավորներ ենթարկվում են ունեզրկման, դրանով իսկ ստեղծում անդունդ՝ հարուստների ու աղքատների միջև։

«Ընկերական դրության մեջ ի՞նչ փոփոխություն կրերե այս նոր զորությունն,— դրում է Մամուրյանը,— ինչպե՞ս օրեօր կավելանա հարստությունն ու հետզհետե այլև այլ խումբերու մեջ կդիզվի, հին հարաբերությունները կըխանգարե, հարուստին և աղքատին մեջ ի՞նչ մեծ վիհ մը կը բանա, տնտեսագետին ուշադրության արժանի խնդիր մե»[4]։

Մամուրյանը քննադատում է կապիտալիստական հասարակության մեխանիզմը, որտեղ բանվորի քրտինքը դառնում է կապիտալիստի դիզած հարստության անսպառ աղբյուրը։

«Բանվորի քրտինքը, հարուստին դրամատերին արյունն էՙ որով կկենդանանա։ Ես չեմ կարծեր որ Բրուտոն և Լ. Պլան, և ուրիշ ընկերահաշտական հեղինակներ, բոլորովին անիրավ են, երբ գործավորին ծանր վիճակին և կրած

[1] Տե՛ս Ա. Դ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. I, 1955, էջ 480։
[2] Անգլիական նամականի, էջ 155—156։
[3] Նույն տեղում, էջ 159։
[4] Նույն տեղում, էջ 157։

օրինական հարստահարության վրա կճառեն։ Նորաձև տնտեսագիտություն մը, պայմանական օրենքներ կտիրեն՝ իրանց բնական, արդար ընթացքը վրդովելու և թշվառության գումարն ավելացնելու»[1]։

Մամուրյանը Անգլիայի օրինակով մերկացնում է եվրոպական «քաղաքակրթությունը», գրելով. «Արդի աղնվականը հին ամուր դղեակին մեջ նստած զրահապատ ասպետին որդին է, որ լորտերու ժողովին մեջ ունի աթոռ մը, որ իր արժանավորության տրիտուրը չէ, արդի գործավորն միջին դարու ստրուկ է, որ քաղաքակրթության անապատին մեջ տեսակ մը վայրենի՝ ոչ տուն, ոչ իրավունք, ոչ բվե, ոչ արև ունի և երկրին վրա թիզ մը տեղ չգտնելով՝ կիջնե անոր անդնդային հատակն ու շատ անգամ ածխահանքեն իր հացը մուրալու ատեն կայրի, կխեղդվի և դիակն անգամ անհետ կլինի»[2]։

Նա քննադատում է բուրժուական ընտրական սիստեմը, որտեղ միայն քվեարկության ժամանակ «ժողովուրդը վեհապետ կհռչակվի», իսկ իրականում ոսկին է տիրապետում քվեատուփին[3] վրա։

Նշավակելով եվրոպական քաղաքակրթությունը, ցույց է տալիս նրա հակասությունները, ավելի ճիշտ սոցիալական հակամարտությունները, որոնք դասակարգային համերաշխություն քարոզող «քաղաքակրթիչների» կողմից սքողվում են։ «Սատանա և հրեշտակը, խավար և լույսը, ավելորդապաշտություն և բանականություն, դերբնական և բնական, այս երկու բաներ թեև ի բնե իրարու հետ շուն ու կատու են, սակայն արդի քաղաքակրթությունը կուզե, որ իրը եղբայր ու քույր քովե քով գահակալին...։ Սքանչելի քաղաքակրթություն»[4]։

Այսպիսով, Մամուրյանը ընդունելով կապիտալիզմի զարգացման առաջադիմական բնույթը, վեր է հանում նրա բացասական հետևանքները աշխատավոր ժողովրդի համար։

Դիմակազերծ անելով եվրոպական «քաղաքակրթիչներին», Մամուրյանը չի վարանում ցույց տալու հայ ժողովրդի՝ ներքին և արտաքին թշնամիների երեսից կրած սոցիալական ու ազգային ճնշումներն ու հալածանքները։ «Հայ գյուղացին կհարստահարե ներսեն ու դրսեն, կհեծեծե, կլա, բայց որմե խնդրե արդարություն։ Իր դատավորն է հարստահարիչ, որու փաստաբան կանգնի, իր ապաշնորհ հայրենակցին, որպեսզի փոխ տրված դրամը չկորուսե»[5]։

Մամուրյանը բացահայտ բողոքում է ամիրաների ու սեղանավորների սոցիալական հարստահարությունների դեմ, որոնք գործիք դառնալով թուրքական փաշաների ձեռքին, հարկերի ու վաշխառության միջոցներով ազդից կորզում էին նրա աշխատանքով ստեղծված հարստության գերակշռող մասը։ «Պոլսի մեծատունները,— գրում է Մամուրյանը,— որ ամիրա կկոչվին, Տաճիկ փաշաներու հետ, որոց սեղանավորներն են, Հայաստանը կկեղեքեն, իրենց շահուն համար։ ...Հայ դրամատերին դանձուն աղբյուրը Հայաստանցիին համբարանոցն է, որու վրա տասնորդի և այլ տուրքե զատ կդրվի նաև փաշաներու ըրած փոխառության տոկոսի բարդ ի բարդ տուրքը, եթե այսպես ներելի է խոսիլ»[6]։

---

1 Անգլիական նամականի, էջ 255։
2 Նույն տեղում, էջ 151—152։
3 Նույն տեղում, էջ 253։
4 Վրույր (Մ. Մամուրյան), Հայկական նամականի, Զմյուռնիա 1872, էջ 101։
5 Անգլիական նամականի, էջ 267։
6 Նույն տեղում, էջ 266—267։

Մամուրյանը բողոքելով այդ հարստահարությունների դեմ, գրում է, որ ժողովուրդը որքան իր գլուխը թեքի, այնքան կճզմվի հարուստների կողմից, որովհետև «Մեծ ձուկը պզտիկը կկլե»։ Պատրիարքն ու ամիրան կճզմեն վարդապետին ու ցածր պաշտոնյային, նրանք էլ իրենց ստորադրյալներին, իսկ սրանք բոլորը «ռամիկ ժողովուրդը», որը եթե համարձակվի ձայն հանել, «...իսկույն անոր աչքին կցուցընեն դժոխքն ու թուրքի լախտն ու լուության կդատապարտեն, այնպես որ կարծես թե այս տեղ ու գավառները հայք հետին ծայր խաղաղ, անդորր ու հանգիստ կյանք մը կվայելեն, թեև ներքուստ կտառապին, կմաշին, կուլան և իրենց արտասուքը լռելյայն կուլ կտան»[1]։

Մամուրյանը անարգանքի սյունին է գամում հայ հարուստներին ու մեծատուններին, որոնք ոսկի դիղելու անհագ տենչով արյունաքամ են անում հայ աշխատավոր գյուղացուն։ Եթե արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիան մտածում է ազգի դրության վերափոխման մասին, իր «գրիչը, գլուխը և հոգին» զոհում է ժողովրդի առաջադիմության համար, ապա «Հայ մեծատունն իր ամբարտավանությամբ զթշվառ և տրտում հայը կնախատե»[2]։

Նկարագրելով ազգի թշվառ վիճակը, նա առաջարկում է վերափոխել երկրի տնտեսությունը, օգտագործել նրա բնական անսպառ հարստությունները, ծաղկեցնել երկիրը, ջրանցքներ բանալ, հիմնել արհեստագործական դպրոցներ, դաստիարակել մարդկանց քաղաքակրթության ոգով։ «Պետք է որ երկաթը, շոգին, էլեկտրական հեղուկը կենդանություն ու շարժում տան այս անշունչ և փշալից բնությանը»,— գրում է Մամուրյանը։

Մամուրյանը ծանոթ լինելով եվրոպական տնտեսագետների ստեղծած ուսմունքին, տուրք տալով բուրժուական տնտեսագիտական մտքին, բազմաթիվ առիթներով ծրագրեր էր կազմում Հայաստանի տնտեսության վերափոխման մասին։

Հայաստանում պատմական որոշ ժամանակաշրջանից հետո կկատարվեն հսկայական տեղաշարժեր, երկիրը «փշալի անապատից» կվերածվի «ծաղկած բուրաստանի»։ Կգա մի օր, և այդ օրը հեռու չէ, գրում է Մամուրյանը, երբ «...այս մեր կոխած հողը մեզ ավելի հունձք պիտի տա, այն օրն որ սա ջրվեժն ու հողն մեզի ավելի ալյուր պիտի տան, այն օրն որ սա գետակը ջրանցքի ձևով ճյուղեր արձակած իր մեջ բեռնաբարձ նավերու երևակայություն պիտի տեսնե. մեքենան անբան հայաստանցիին տեղը պիտի բռնե, այս բլրակեն արծաթ ու ոսկի պիտի թափին, այս սև քարերեն հուր պիտի ժայթքին, այս մետաղներեն գործիք, հրազեն ու վառոդ պիտի ձևանան, այս կենդանիներն ու բույսերն մեզի կտավ, կերպաս ու մետաքս պիտի հայթայթեն, այս լեռներն ու բլրակներն շոգի պիտի փչեն... հարթ ուղիներն ու շնչավոր թելեր քաղաքներն գյուղերուն հետ և դաղափարներն զգացումներու հետ պիտի կապեն, այս գլուխներեն ու սիրտերեն ազատության, արդարասիրության ու Հայրենասիրության ոգին ու զգացումները բուրելով, միություն, աշխատակցություն և հոսանք մը պիտի հաստատե կենդանության, լուսո և իմացական զարգացման կարոտ հողերուն և բնիկներուն մեջ։ Այն օրն պիտի համարձակինք ըսել, որ... Հայաստանի ջրերն ու քարերը, հովիտներն ու անտառները և բոլոր թաքուն հարստությունները

[1] Անգլիական նամականի, էջ 194։
[2] Հայկական նամականի, էջ 90։

շարժման մեջ կգտնվին և մեծ ապագայի մը սահմանված անկյալ ժողովուրդ մը կը վերականգնեն»[1]։

Նա առաջարկում էր «հարմար տափարակ ու անցուկ տեղերը բրամվեյներ և երկաթուղիներ շինել, երկաթի գործարաններ, արհեստանոցներ հաստատել... գլխավոր քաղաքներու մեջ դպրոցներ, տպարաններ, թերթեր հիմնել, գյուղերու մեջ վարժարաններ բանալ...»[2]։

Տնտեսական, ժամանակի իմաստով, «այս հսկա հեղափոխության» իրականացման համար Մամուրյանը պահանջում էր «աշխատություն, հարատևություն և միություն»[3]։

Այս ծրագրերը պետք է իրագործվեին ոչ շուտ, քան մի հիսնամյակում, («հարատևություն»), որի իրականացման համար պահանջվում էր, «ազգին բոլոր դասերուն», եկեղեցականների, դասատուների, գիտնականների, մեքենագործների, արհեստավորների, բանվորների, մշակների, մեծատունների, դրամատերերի («միություն») երկարատև, քրտնաջան՝ կամավոր սկզբունքով, շահագործումից զերծ ֆիզիկական ու մտավոր աշխատանք («աշխատություն»)[4]։

Եթե «Անգլիական նամականի»-ում ստեղծած ծրագիրը, որը համարյա նույնն էր, պետք է կենսագործեր ներսեսը («Անգղիական նամականի»-ի հերոսը) իրեն ընձեռնված անձնական հսկայական հարստության միջոցով[5], ապա այստեղ գործը պիտի կատարեր ամբողջ ազգը, հաշվի չառնելով նրա մեջ եղած սոցիալական հակամարտություններն ու դասակարգային շերտավորումը։

Այսպիսով Մամուրյանը հայ ժողովրդի տնտեսական դրության վերափոխման մասին առաջադրած իր սկզբունքներով ազդարարում էր բուրժուական հարաբերությունների մուտքը Հայաստանում, քննադատում նրանց բացասական՝ և դրվատում դրական կողմերը, հենց դրանով էլ կանգնում էր ռեֆորմիստական պլատֆորմի վրա, որից զերծ չէին «Բարեգործական»-ի անդամակիցներ Ծերենցը, Ա. Հայկունին և ուրիշները։ Սակայն, եթե տնտեսական հարցում նա բարեփոխությունների տեսակետի վրա էր, ապա նրա հարակից մյուս հարցերում, հատկապես ազգային ազատագրական շարժման հարցում, Մամուրյանը հարում էր ռադիկալ դեմոկրատներ Հ. Սվաճյանի, Կ. Փանոսյանի և այլոց տեսակետներին։ Մ. Մամուրյանի գաղափարախոսության առանցքն էին կազմում ժամանակաշրջանի արևմտահայությանը հուզող ազգային ազատագրական պայքարի հարցերը։ Նա «ներսի թշնամուց» սոսկալի էր համարում «դրսի թշնամուն»՝ սուլթանական կառավարությանը և պայքարի մարտակոչ էր նետում ժողովրդական մասսաներին՝ զինված ապստամբության միջոցով հայության ձեռքերը փրկելու դարավոր շղթաներից։

«Ազատություն իմ կյանքս ու հավատս է,— գրում էր Մամուրյանը,— կանդոսանեմ զենքդ, ասի անվեհեր, մինչդեռ հրեշտակս սիրտ առ կգոչեր..»[6]։ Մ. Մամուրյանը բողոքելով սուլթանական գրաքննչական օրենքների դեմ, գրում է. «Ազգին մեջ երկպառակություն հարուցելու համար գրելու ազատու-

---

[1] Մ. Մամուրյան, Սև լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 302, համեմատիր «Արևելյան մամուլ», հունիս, 1877։

[2] «Արևելյան մամուլ», օգոստոս, 1878, էջ 139։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

[5] Անգլիական նամականի, էջ 194։

[6] Հայկական նամականի, էջ 177։

թյուն կա-— բայց որևէ ճշմարտություն պարզորեն գրելու ազատություն չկա։ Ո՞վ կարգելէ այս ազատությունը.— Անոնք որոնց վրա խոսելու ազատություն չունիմ... վասնզի Թյուրքաստան կգտնվիմ»[1]։

Սուլթանիզմի ծանր ռեժիմի տիրապետության ներքո հրապարակախոսը կարողացել է համարձակ կերպով քննադատել սուլթանական ու ցարական կառավարություններին և հայ ժողովրդին մարտակոչ է նետել ազգային-քաղաքական շարժման համար։ Մամուրյանը տեսնում է, որ «անտարակույս օրին մեկն, և այն օրն մոտալուտ է, փոթորիկը պիտի բրդի... ժողովուրդը պիտի կանգնի, և պիտի կանգնեն այն ստրուկ ժողովուրդներն, որ իզուր այժմ իրենց աչքը կդարձնեն մեր կողմեն, և միայն նուրբ շահասիրության հաշիվներ կտեսնեն»[2]։

Հրապարակախոսը հայրենասիրական պաթոսով նկարագրում է հայերի այն աղետալի գրությունը, որի մեջ ապրում և խեղանդամվում են սուլթանական կառավարության ձեռքին։ Սուլթանիզմի կամակատար փաշաներն ու քոչվոր վաչկատուն քրդական վերնախավը. «...ջուրի տեղ արյուն կիմեն, հացի տեղ մարդու միս կուտեն, անկողնի տեղ արյունալի դիակներու վրա կպառկին և ժողովուրդն որ կսպասե, ինչպես կսպասեն գառնուկները սպանդարանին դուռն, այս գառնուկներուն չափ չկան, որ քանի դահիճին մերկ ու շողուն դանակը տեսնեն՝ աչքերնին կդառնա, կցատկրտեն, կգալարին և մարդու դեմքով ներկայացող անբնական մահվան դեմ խերկելով՝ կմաքառին...»[3]։

Հրապարակախոսը «Հայկական նամականի» աշխատության և «Արևելյան մամուլ» պարբերականի մեջ բազմաթիվ էջեր է հատկացնում սուլթանական կառավարության լծի տակ հեծող հայ ժողովրդի քաղաքական իրավազուրկ վիճակի նկարագրությանը։ Մամուրյանը թուրքական գրաքննչական պայմաններում մերկացնելով Թուրքիայի ազգահալած քաղաքականությունը, ցույց տալով հայերի, հույների, քրիստոնյա մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի ուղիները, աչքաթող չի անում ռուսական ցարիզմի քննադատությունը։

Ցարական Ռուսաստանի դեմ հրապարակախոսի՝ Մամուրյանի կողմից մղած գաղափարական պայքարը ցայտուն կերպով արտահայտվել է հակասություններով ու իրարամերժ տեսակետներով լի «Սև լեռին մարդը» վիպակում։ Մ. Մամուրյանը այդ վիպակով քննադատում է ցարական Ռուսաստանը, նրա վարած արտաքին ու ներքին քաղաքականությունը։

Ճիշտ բացահայտելով ցարիզմի՝ Թուրքիայի դեմ վարած պատերազմների և այդ պատերազմներում հետապնդելիք ծրագրերի էությունը, Մ. Մամուրյանը չկարողացավ ճիշտ գնահատել նրանց հետևանքները։ Նա չըմբռնեց, որ ցարիզմը ձգտելով տիրանալու Կոստանդնուպոլսին և նեղուցներին, Ռուսաստանին միացնելով Արևմտյան Հայաստանը, միաժամանակ արևմտահայությանը փրկում էր ֆիզիկական բնաջնջումից, որի հետևանքով նրա բախտը կապվում էր ռուս մեծ ժողովրդի բախտի, ապագա ռևոլյուցիոն շարժումների հետ։

Սխալվում էր հրապարակախոսը, քաղաքական ապակողմնորոշման ենթարկում ժողովրդին, երբ հայերի միացումը Ռուսաստանին համարում էր

---

[1] Հայկական նամականի, էջ 8։
[2] Անգլիական նամականի, էջ 244—245։
[3] Հայկական նամականի, էջ 174։

սխալ և հույսը դնում էր սեփական ուժերի վրա, այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը միայնակ, երբեք էլ չէր կարող ազատագրվել ոչ սուլթանիզմի և ոչ էլ ցարիզմի տիրապետությունից։

Քննադատելով ցարիզմը, այդ չէր նշանակում թե հրապարակախոսը անտեսում էր ռուս ժողովրդի՝ հայերի և քրիստոնյա մյուս ժողովուրդների նկատմամբ կատարած պրոգրեսիվ դերը։ Նա ժամանակին նկատեց և կռահեց Ռուսաստանում կատարվելիք ռևոլյուցիայի մասին, որը փայլուն ապագա կստեղծեր ոչ միայն ռուսների, այլև նրա կազմում մտնող մյուս բոլոր ժողովուրդների համար։ Այդ ռևոլյուցիայից հետո կստեղծվեր նոր Ռուսաստան, որի կազմի մեջ մտնող ժողովուրդները ինքնուրույնությամբ պետք է կառավարեին իրենց հատուկ շահերը։ Այդ ժողովուրդները ընդհանուր դաշինքով կմտնեին մեկ պետության մեջ և կստեղծվեր «դաշնակցած Ռուսիա»։ «Եթե այս ժողովրդային հեղաշրջումը վրիպի,— գրում էր Մամուրյանը,— բաղաքականը պիտի գա անվրեպ և Ռուսիան պիտի ալեկոծէ, պառակտէ։ Կրգուշակեմ արդեն այդ հեղափոխության պայմանները... գեր ապազային մեջ կրեբեւակայեմ նոր Ռուսիա մը, չէ թէ զատ-զատ տերություններու բաժանված զատ-զատ կառավարության ներքև, այլ դաշնակցած Ռուսիա մը՝ ամեն հարստական կապերէ ազատ՝ որու այլադեմ ու այլասեռ ժողովուրդները ինքնօրինությամբ պիտի վարեն կառավարեն իրենց հատուկ շահերն տարբեր օրինաց ու սովորության ներքև»[1]։

Սակայն ըստ Մամուրյանի հայերը չպետք է սպասեն այդ «փրկավետ ապագային», այլ պետք է զենքի դիմեն և զինված ապստամբության միջոցով խորտակեն սուլթանիզմի տիրապետությունը և իրենց համար ստեղծեն բաղաքական ազատություն։ Մամուրյանը ուղղակի զինված ապստամբության մարտակոչ է նետում հայ ժողովրդին։ Նա գիտակցում է, որ կռվում կարող է կամ հաղթել կամ մեռնել, բայց մեռնել ոչ թէ փախուստի ժամանակ կռնակից վիրավորվելով, այլ դեմ առ դեմ կռվելով, ճակտից վիրավորվելով։ Մամուրյանը կոչ էր անում հայերին ազատագրական պայքարի օրինակներ ցույց տալ Թուրքիայի լծի տակ գտնվող մյուս ժողովուրդներին։

«Այն, որ անգամ մը ճշմարտության վահանը կուրծքը դրած ասպարեզ կընետվի՝ պետք է որ կամ հաղթէ կամ մեռնի։ Եթէ հաղթությունը դժվարին է արդի նախապաշարմանց ապառաժին դեմ և մոլության տղմին մեջ, պետք է մեռնիլ։ Մեռնիլ՝ չէ թե կռնակն վերբ առնելով այլ ճակտե (ընդգծումները մերն են—Հ. Ղ.)։ Ինչպես հավատին՝ այնպես սկզբունք մը նահատակելով կվերածնի, և եթե այս ճշմարտությունն արյան գնով իրենց ընկերական և քաղաքական իրավունքները ձեռք ձգող ազգերուն հայտնի անգամ չլիներ, հայերը պետք էին քարոզել զայն անոնց, քանի որ իրենց հավատքին կենդանի նահատակներն են և դարե դար անոր շնչով կվերածնին»[2]։

Սուլթանական բռնության դեմ բողոքի և ապստամբության կոչով, Մամուրյանը դիմում է իր ազգակիցներին, գրելով.

«Բողոքե այս բռնության դեմ, այսպես է աշխարհը, կուգոռան, ապստամբե, և իսկույն սուտին թեկն կհասնի զենքը, ու ապստամբ կիյնա»[3]։

Մամուրյանը իրավամբ բարձր է գնահատում հայրենի ազատության համար մարտնչող հերոսների արժանիքները, որոնցից ամեն մեկը տոգորված իր

[1] Մ. Մամուրյան, Սև լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 165--166։
[2] Կրույր, Հայկական նամականի, էջ 80։
[3] Մ. Մամուրյան, Անգլիական նամականի, էջ 68։

արդար գործի հաղթանակի վառ հույսերով «տասը վարձկան զինվոր կարժեն, զինվորներ, որոնք անիրավ դատի և շահու համար միայն ասպարեզ կիջնեն»[1]։

Հայրենասեր զինվորները եթե վրեժխնդիր լինեն թշնամու նկատմամբ և սուրը ձեռքին պայքարեն նրա դեմ, ապա կկարողանան տապալել Հայաստանի վրա ծանրացած օտարի դարավոր տիրապետությունը։

Նա իր հերոսներից մեկին «Վրեժ» է անվանում, մյուսին «Սուր», վստահ լինելով, որ եթե «Վրեժն ու Սուրն, ամեն հայու հոգին թափանցեն ու բազուկը զինեն, Հայաստանի դարերու աղետքը կջնջվի»[2]։

«Սև լեռին մարդը» վեպի հերոսներից Ատոմին ուղղված Դերենիկի հարցադրմանը՝ թե «Մեր հայրենիքը եթե ետ պահանջենք չեն տա օտարները» Մամուրյանը պատասխանում է՝ «կտան»։ «Այո՝, սուր ի ձեռին, Դերենիկ, հորդ պես։ Յեռկար ու պատմական փաստ շատ հին են և իրավունք մը են կազմեր, բայց սուրը միշտ սուր է»[3]։

Մամուրյանը հայ ժողովրդի ազատագրման հարցը կապում էր ամբողջ աշխարհի ժողովուրդների ազատագրական պայքարի հետ։ Նրա կարծիքով եթե մի օր բոլոր այդ ժողովուրդները միասնաբար հանդես գան իրենց կառավարությունների դեմ, «մի միայն պատմության և հնության իրավամբ իրենց երկիրներն ու թագը պահանջեին, ինչպես որ դու կպահանջես Հայաստանինը, երևակայե միանգամ թե երկրագունդիս ո՞ր մասին մեջ այժմու տերության մը պիտի կարենար կանգուն մնալ և ըսել, «Այս իմ օրինավոր զուտ սեփականությունս է, իմ բնական իրավունքս է»։ Գրեթե ամենքը հաջորդական անիրավության և բուռն աշխարհակալության արդյունք են և միակ շարունակությամբ տիրապետության իրավունք մը ստացած են, իրավունք մը, որուն հիմը ստեպ սուրի ծայրին եղած է քան արդարության...»[4]։

«Այս ալեկոծության» ժամանակ հրապարակախոսը երազում էր տեսնել ազատագրված Հայաստան, արյունակիցների ազատ, համերաշխ գործունեություն, հայրենիքի ծաղկում ու բարգավաճում։

Այսպիսով, Մամուրյանը 1860—1870-ական թվականների սկզբին զինված ապստամբության միջոցով էր լուծում հայ ժողովրդի ազատագրման պրոբլեմը։

Ազատագրական շարժման մասին իր հայացքներով Մամուրյանը կանգնած էր 19-րդ դարի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսների ու գործիչների դիրքերի վրա, որոնց հիմքը կազմում էին 18-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների սահմանադրական հայացքները[5]։ Մամուրյանը համակրելով Ռուսսոյի, Սեն-Սիմոնի, Շարլ Ֆյուրեի հայացքները, առաջ է անցնում նրանցից և ապստամբությունն է համարում այն զորեղ միջոցը, որը կկարողանար մարդկությանը ազատել ֆեոդալական կապանքներից։

«Կսիրեի ազատություն, կատեի իշխանական թագ ու գավազան։ Շարունակ միտքս կհուզեին ընկերական խնդիրներ։ Ռուսսո, Հյում, Պենտահմ Ս.-Սիմոն, Ֆյուրեի և ուրիշների ընկերահաշտական հեղինակներին գործերը կարդացեր

---

1 Մ. Մամուրյան, Անգլիական նամականի, էջ 220։
2 «Արևելյան մամուլ», մայիս, 1876. համեմատիր Սև լեռին մարդը, էջ 231։
3 Նույն տեղում, էջ 50։
4 Նույն տեղում, էջ 52։
5 Տե՛ս Ա. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. I, էջ 540։

լափեր էի, սակայն, ինչպես ամեն ուսանող, ես ալ ժողովրդոց անկախության, բարօրության, արդարության հաղթանակը կերազեի։

Կդիտեի որ Եվրոպայի քաղաքականություն կոչվածն, հարստությունն ու երջանկությունը միայն դաս մը մարդիկ կը վայելեն, իսկ մյուսները թշվառ ստրուկներ են, որ ոչ միայն կրթությամբ, այլ ապստամբությամբ պիտի վերածնին և իրենց շղթաները թակելու պիտի հաջողին»[1] (ընդգծումները մերն են — Հ. Ղ.)։

Մամուրյանը զմայլանքով է խոսում Իտալիայի ազատարարներ Մազձինիի ու Գարիբալդու մասին, որոնք պայքարի դրոշ բարձրացրին ոչ միայն իտալական «մանր-մունր իշխանությունների դեմ», այլև զինված ապստամբություն բարձրացրին եվրոպական գահակալների դեմ, գաղտնի ընկերություններ հիմնեցին և «ազատության ու անկախության ոգին գործավորներու մեջ սփռել կջանային»[2]։

Սակայն «ընկերական սկզբունքներ» ունենալը, գաղափարներ ու ծրագրեր մշակելը դեռևս բավական չէր, այլ հարկավոր էր այն գործադրության մեջ դնել։ Հրապարակախոսը խոստանում է, որ իրենից առաջ եղել են բազմաթիվ գործիչներ, որոնք քննադատել են տիրող անարդար կարգերը, պայքարել են «կղերին փառամոլության ու տիրապետության դեմ, բռնապետական իշխանության դեմ, ազնվականաց լրբության դեմ, դրամագլխի անիրավության դեմ, մեկ խոսքով անթիվ ընկերային (սոցիալական — Հ. Ղ.) զեղծման դեմ և այս դարավոր չարիքը ջնջելու համար զանազան միջոցներ կխորհէին»[3]։

Եվրոպայում գործնական քայլեր և պայքարի օրինակ է ցուցաբերում Ֆրանսիան, որը խորտակելով թագավորական գահը, չկարողացավ վերացնել բռնությունը, դրանով իսկ Մամուրյանը ցույց է տալիս, որ բուրժուական ռեսպուբլիկան իրեն չի բավարարում[4]։

Մամուրյանի ծրագրած ազատագրական պայքարը պետք է ընթանար Ֆրանկլինի, Վաշինգտոնի, Գարիբալդու նշած ուղիով։

19-րդ դարի ազատագրական շարժումները խորը կնիք էին դրել Մամուրյանի հայացքների վրա. դրա ապացույցն այն է, որ հրապարակախոսը բոլոր հարցերի լուծման ժամանակ դիմում է վերջիններիս օգնությանը և նրանց անունից սպառնալիք կարդում ֆեոդալական իշխանավորներին։

Մամուրյանի երազած «նորահաս պատանի» ազատությունը ոչ Կրոմվելի ավետարանն էր և ոչ էլ Նապոլեոնի հրաշեկ ռումբը, այլ Սոկրատի լեղի բաժակը, Նազովրեցիին խաղը, Վարդանա արյունը, Պրուտոսի դաշույնը, Բելի նեաը, Տանդոնի որոտընդոստ ձայնը, Ֆրանկլինի գրիչը, Վաշինկթընի և Կարիպալտիի դրոշակն... և ո՞ր մեկն ըսեմ»։ Իտալական և ամերիկյան ազատագրական շարժման մասնակիցները Գարիբալդու և Վաշինգտոնի ղեկավարությամբ «քաղաքական փոթորիկներ կհուզեն և թնդանոթի վրա կոթնած տերություններն անգամ կտապալեն...։ Վայ այն իշխանության, որ այս հեղեղատին դեմ թումբ կկանգնե»[5]։

Մամուրյանը բարձր գնահատելով պատմական անցյալում եղած ազատա-

---

1 Անգլիական նամականի, էջ 117 և հետո։
2 Նույն տեղում, էջ 118։
3 Նույն տեղում։
4 Հայկական նամականի, էջ 153.
5 Նույն տեղում։

գրական շարժման ղեկավարներին, չի տարվում նրանցով և փոխադրում տվյալ շրջանը։ Նա իրավամբ գիտակցում է, որ մարդիկ ժամանակաշրջանի ծնունդ են։ «Ուստի այս գարուս մեջ Դել մը, Ֆրանքլին մը, Վաշինկթըն մը պետք է լինի, որպեսզի մեծությունը պահե»[1]։

Մամուրյանը համակրելով 19-րդ դարի 60-ական թվականների եվրոպական ու ամերիկյան ազգային ազատագրական շարժումները, կտրուկ կերպով մերժում է օտար պետությունների միջամտությունը հայ ժողովրդի ազատագրության պայքարի գործին։

Հայ ժողովրդի ազատագրման գործին, ըստ Մամուրյանի, պետք է մասնակցեն ոչ թե հատ ու կենտ անհատներ, այլ հիմնադրվելիք գաղտնի ընկերությունների մասնակից հանդիսացող, ազգի ազատության համար նահատակներ գրվող, հազարավոր աշխատավորներ, դրանց թվում և գյուղացիներ, և բանվորներ։

Ազգային ազատագրական ու սոցիալական պայքարի ասպարեզում հարելով բուրժուական-դեմոկրատիային, Մամուրյանը համառ պայքար ծավալեց ֆեոդալիզմի ու նրա պաշտպան հանդիսացող կղերա-ամիրայական դասակարգի պահպանողական իդեոլոգիայի դեմ։

«Հայկական նամականի» աշխատության մեջ Ստենտորի դիմակի տակ թաքնված Զամուռճյանը անարգանքի սյունին է գամվում հրապարակախոսի կողմից։

Մամուրյանը Զամուռճյանի «երևակը» համարում է «Մոլորական հրեշ», որի հիմնական պաշտոնն է «Իժի լեզվով» և «կրոնավորի կրքոտությամբ» կրրպարտել մարդկանց, հավատաքննության խարույկների դատապարտել և առաջավոր իդեաների պաշտպանների դիակներն այրելով՝ ամփոփել ամենախորը տեղերում «վասնզի,— գրում է Զամուռճյանը,— կարող են կայծեր արձակելու իրենցեն և ամբողջ աշխարհը վառել հեղափոխության կրակով»[2]։

«Բարեգործական»-ի անդամ Մատթեոս Մամուրյանը անշուշտ ծանոթ էր Միքայել Նալբանդյանի հետ, համակրում էր նրա հայացքները, չնայած, որ տնտեսական խնդրի լուծման կապակցությամբ չկարողացավ կանգնել նալբանդյանական պլատֆորմայի վրա։ Նա միայն հերկում էր այն հողը, որի վրա պետք է սերմանվեր Նալբանդյանի «Երկրագործության» սերմերը»[3]։

Նալբանդյանի համակրման օգտին կարող է խոսել նաև այն փաստը, որ Մամուրյանը վերջինիս պաշտպանությամբ էր քննադատում Զամուռճյանի «դիվապաշտական ոգին»[4]։

Մամուրյանը արևմտահայ 60—70-ական թվականների գործիչներից միակը էր, որ կարողացավ նկատել Զամուռճյանի վաճառվածությունը երկու իրար թշնամի թուրքական և ռուսական կառավարություններին, միաժամանակ՝ փողի, շահի դրդումից իր դրիչը նվիրելով և մեկին, և մյուսին։

---

1 Անգլիական նամականի, էջ 20—21։

2 Հայկական նամականի, էջ 175։

3 Մանրամասն տե՛ս Ա. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. I, էջ 488—495։ Մ. Նալբանդյանի և Մ. Մամուրյանի գաղափարական և գրական կապերին մենք չենք անդրադառնում, քանի որ այդ հարցը քննարկվում է Ա. Գ. Հովհաննիսյանի վերոհիշյալ, երկուհատորանոց, ստվարածավալ աշխատության տարբեր բաժիններում։

4 Տե՛ս Հայկական նամականի, էջ 101։

Զամուռճյանը «Որավախոհի» հատորները տպագրելով Պոլսի ռուսաց դեսպանից ստացված փողով, նույն պահին ամբաստանում էր սուլթանիզմի դեմ պայքարող հայ դեմոկրատական երիտասարդությանը, «որևէ շարժում կամ հակում մ՚ որ այս իշխանության ներհակ կգտնե ապստամբական ցույց կհամարի և իսկույն անոր դեմ այնքան կգոռա, որ ձայնը տերության ականջ կհասնի»[1]։

Նա քարոզում էր կույր հնազանդություն արտաքին և ներքին թշնամու առաջ, «սրբությամբ» պաշտպանելով ավետարանի «խրատը բառ առ բառ»։

Զամուռճյանը «կհորդորէ,— գրում է Մամուրյանը,— երբ քյուրդը հայուն մեկ ոչխարը գողանա, հանե իր կովն ալ տա., երբ կինը անպատվե, հանե աղջիկն ալ ընծայե, երբ գլուխը կտրե՝ կտրող ձեռքը համբուրե հավատարմություն, անսասան անձնուրացություն առ մեծն, առ զորավորն, այս է ահա իր քարոզն, թե տան, թե եկեղեցու, թե ժողովի մեջ»[2]։ Քննադատելով Զամուռճյանին Մամուրյանը ի նկատի ուներ ոչ թե սոսկ անձնավորությանը, այլ ռեակցիոն-պահպանողական հոսանքի ղեկավարին, որի կուսակիցների մասին գրում է. «Եվ այս դասուն բերանն էր աստվածաբան Երևակն և ծանծաղամիտ Արևելյան դարը», որոնք միասնաբար, կրոնի պաշտպանության քողով խաչակրած արաշվանքի էին դուրս եկել Նալբանդյանի ու նրա հետևորդների դեմ։

Քննադատելով կղերա-ֆեոդալական հոսանքի պարագլուխներին, Մամուրյանի ուշադրությունից չվրիպեցին կրոնն ու կրոնավորները։ Չհամակրելով ֆրանսիական մատերիալիստների հայացքները, հրապարակախոսը հիմնականում մնաց իդեալիզմի դիրքերում, որը չխանգարեց նրան քննադատելու կրոնն ու նրա պաշտոնյաներին, մերկացնելու նրանց ռեակցիոն էությունը։

«Կրոնի վրա իմ համոզումս գիտես,— գրում է Մամուրյանը,— Հենակ մե այն մարդկային տկարության և գործիք մը կառավարության ձեռքը։ Պարզամտության ու երկյուղի ծնունդ, ավանդությամբ մարմին ու կերպարն ստացավ և կեղծավորություն ու շահամոլություն զայն նվիրագործեցին։ Կրոնի հին ու նոր պատմությունը մարդկային երևակայության ու կրից պատկերն է և իր սոսկալի աղետից նկարագիրն ու հետադիմության գրգիռ։ Անմահություն քարոզեց և մարդիկ մահացուց, արքայություն խոստացավ և ասդին անդին դժոխք դարձուց, հավատարմություն ու հավասարություն հռչակեց և ստրկության շղթաներ դարբնեց, լույս ու խաղաղություն ավետեց մեզ և խավար ու խռովություն սփռեց։

Բաց պատմություն ու կարդա այն աստվածաբանական վեճերն ու կռիվները, որ բոլոր Եվրոպան արյունլվա ըրին և անթիվ մարդկային զոհեր Քրիստոսի խորանին առջև մատուցին»[3]։

Հատկանշականն այն է, որ Մամուրյանը կրոնի քննադատության հարցում դուրս չի գալիս նեղ լուսավորչական եկեղեցու պաշտպանության կամ նրա քննադատության դիրքերից, այլ ելնելով ազատագրական պայքարի և ժողովուրդների իրավունքների պաշտպանության դիրքերից քննադատում է կրոնն ու եկեղեցին ընդհանրապես։

Մ. Մամուրյանը քննադատելով եկեղեցին և եկեղեցականների գործունեությունը, չէր հանգում վերջինիս ժխտմանը, այլ պահանջում էր ռեֆորմի են-

---

[1] Հայկական նամականի, էջ 203։
[2] Նույն տեղում, էջ 203։
[3] Անգլիական նամականի, էջ 139։

թարկել այն, վերացնել ֆեոդալական միջնադարից ժառանգած կրոնական օրենքները և ստեղծել նոր բուրժուական եկեղեցի, որը ընդունակ կլինի նպաստելու ազգի ազատության, առաջադիմության և լուսավորության գործին։

1860—1863 թթ. Պոլսում «Ազգային սահմանադրության» համար ծավալված պայքարի առաջամարտիկներից մեկն էր Մ. Մամուրյանը, որը կարողացավ վերլուծել տարբեր խմբերի ու հոսանքների վերաբերմունքը դեպի սահմանադրությունը։

Ռեակցիոն կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչները ձգտում էին կամ բոլորովին արգելել սահմանադրությունը, կամ լավագույն դեպքում հաստատել, բայց շատ պարզ կառուցվածքով, նշանակելով ցմահ պատրիարք, որը ամիրաներից ստեղծված ծերակույտի օգնությամբ կկառավարեր ազգի ներքին գործերը՝ հաշվետու լինելով «միայն աստծո առջև»։

Լիբերալ սահմանադրականները սահմանադրությամբ ուզում էին ստեղծել ազգային կրոնական ու քաղաքական ժողովներ, որոնց մեջ աշխարհականները մեծամասնություն կազմելով կկառավարեին ազգի ներքին գործերը, հաշվետու լինելով իրենց ընտրողների, այսինքն «ժողովրդի առջև»։ Լիբերալները դրանով իսկ պաշտպանում էին միայն նորելուկ բուրժուազիայի շահերը և նրա համար, ի հակակշիռ ամիրայության, տեղ էին նվաճում ազգային գործերի կառավարման ասպարեզում[1]։

Մամուրյանը հակադրվում է այս երկու հոսանքին պատկանող գործիչների առաջարկներին և ելնելով դեմոկրատիայի պահանջներից գրում է.

«Ռամիկը կըսեր.— դարերե ի վեր գերության և թշվառության լուծը կճնշե վիզս, ոչ հաց ունիմ, ոչ լույս, ոչ սիրտ։ Կրոնականը հոգիս ու քսակս կքամե, իշխանը գլուխս կճզմե և ես կրկնակի ստրուկ դարձած եմ և կամք չունիմ և ոչ կարողություն իմ տնական և ազգային գործերս տնօրինելու։ Սահմանադրությունը մեր բոլոր ցավերուն դարմանը պիտի լինի, մեզի առատություն, բարբություն և երջանկություն պիտի բերե, և ուղղակի եղեմական դրախտ պիտի տանե։

Եվ ռամիկը հույսեր ուներ և ոչ հրապարակական գործ և բերան»[2]։

Մամուրյանի այս հույսերը կապվում էին 1860 թ. սահմանադրության հետ։ 1863 թ. սահմանադրության վերահրատարակումից հետո ազատախոս հեղինակը ղգաց սահմանադրական պատրանքները և սկսեց քննադատության ենթարկել «Մասիս» պարբերականին և նրա շուրջը համախմբված լիբերալ սահմանադրականներին։ 1863 թ. հետո «...երբ սահմանադրասեր հայը կտեսնեմ այժմ,— գրում է Մամուրյանը,— կհիշեմ այն մուրացկանին, որ մեղրի գոց ամանին վրա հաց կքսեր կուտեր, և կկարծեր, թե մեղր է կերած... և հյութը ձեռք ձգելու անկարող, անոր հոտով կկշտանար»[3]։

Ժողովուրդը դուրս եկավ սահմանադրությունը պաշտպանելու, սակայն երբ տեսավ, որ իր վրա բարդում են «անլուր զրպարտանքներ, դեպի Ունքյար Իսկիլեսի կատարած տոնական հանդեսը, որպես «...ապստամբության հանդես կներկայացնե տերության առջև։ Երբ տեսանք, որ նույնիսկ սահմանադրության հեղինակները իրենց պաշտոնական դիրքերը փոխելով փոխած են նաև իրենց հա-

[1] Անգլիական նամականի, էջ 124։
[2] Հայկական նամականի, էջ 158—159։
[3] Նույն տեղում, էջ 145։

մոզումն»[1], տեսավ որ ինքը հուսախաբված է, թողեց և հեռացավ սահմանադրական պայքարի թատերաբեմից։

Մամուրյանը սահմանադրականներից հեռացող բազմության մեջ առաջիններից էր, որ սկսեց քննադատել կրոնական ու քաղաքական ժողովների անգործունյա վարքագիծը, պահանջելով գոնե սահմանադրության այդ չնչին հոդվածների կիրառումը, գրելով. «...Ես այս սահմանադրությունեն բան մը չհասկցա»[2]։

Պախարակելով «Մասիս» լիբերալ պարբերականը և նրա «Բարեկամ»՝ սահմանադրության վերաքննված տեքստի հեղինակներին, գրում է. «Միթե Պոլսի հայը սահմանադրությո՞ւնը պիտի մեջ բերե, զոր հանուն ազգին շինեց, տպեց և ծոցը դրավ»[3]։

1863 թ. հետո ազգային կենտրոնական վարչության, ազգային հիվանդանոցի և սահմանադրությամբ ստեղծված բոլոր հիմնարկների ու նրանց ղեկավար գործիչների դեմ Մամուրյանի պայքարը, իր հիմքում ուներ ազատագրական պայքարի գաղափարը։ Զեյթունի և Վասպուրականի ապստամբություններից հետո, երբ «Սահմանադրական» վերոհիշյալ հիմնարկությունները պատրիարքարանի ղեկավարությամբ լռության հետ միասին կույր հնազանդություն ցուցաբերեցին սուլթանական կառավարության առջև, Մամուրյանը վրդովված սկսեց քննադատական ու պախարակիչ հոդվածներ տպել սրանց դեմ։

Մամուրյանը պայքարելով կոմպրադորական բուրժուազիայի իդեոլոգ Յուբյուճյանի և նրա «Մասիս» պարբերաթերթի շուրջը խմբված չափավոր լիբերալների դեմ, չէր դադարում պայքարելուց մյուս լիբերալ գործիչներ Սերվիչեի, Նար-Պեյի, նույնիսկ դեմոկրատիզմից դեպի լիբերալիզմ գնացող դոկտոր Շիշմանյանի դեմ, որոնց դիմաստվերները երևում են «Հայկական նամականի» աշխատության էջերում։

Մամուրյանը քննադատում է արևմտահայ 60-ական թվականների լիբերալների գործունեությունը, ցույց տալիս նրանց շրջադարձը պրոգրեսիվ դիրքերից դեպի ռեակցիան և իր բողոքի ձայնն է բարձրացնում Նալբանդյանի բանտարկության կապակցությամբ։

Նալբանդյանի պաշտպանությամբ քննադատելով լիբերալներին, Մամուրյանը մերժում էր նրանց եվրոպական օրիենտացիան և հենվելով ազգության ներքին ուժերի վրա, նրա ազատագրման հույսը կապում էր զենքի ուժի հետ։

«Արևելյան մամուլ» պարբերականում, տպագրելով Ծերենցի պատասխան հոդվածը «Մշակ»-ում տպագրված Մելիքզադեի (Բաֆֆու) հոդվածի դեմ, անում է ուշադրության արժանի մի վերապահում։

Երբեմնի դեմոկրատ, բայց 70-ական թվականներին դեպի լիբերալիզմն ընթացող, Ծերենցը հակադրվելով Բաֆֆու և Արծրունու ապստամբական կոչերին, գրում է. «Մենք կուզենք, որ ամեն հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն (ընդգծումները մերն են — Հ. Ղ.), վարեն եկած հեղափոխությունը (թե որ հաջողվի ալ) այնչափ աղետք, այնչափ թշվառություն ունին և այնչափ արյունների առիթ կլինին և հայ ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողությունեն վեր է այդ մասին շռայլ լինել. և ընդհակառակն, վերեն

1 Հայկական նամականի, էջ 161։
2 Նույն տեղում, էջ 34։
3 Նույն տեղում, էջ 28։

Լկած հեղափոխությունը միշտ հաստատ են և երբեք այն արյանց դիներով չեն լինիլ»[1]։

Մերենցի այս ակնհայտ ռեֆորմիստական տողերի դեմ Մամուրյանը գրում է հետևյալ խմբագրական ծանոթագրությունը. «Ներվի մեզ ասել, որ այս մասին Մեծն նամակագրին հետ տարակարծիք կգտնվինք։ Այդ դրությունն ամեն տեղի ու պարագայի չկրնար հատկանալ»[2]։

Այսպիսով, Մամուրյանի պայքարը Սերվիչեի, Նար-Պեյի և նույնիսկ Շիշմանյանի ռեֆորմիստական տեսակետների դեմ, ցույց են տալիս նրան որպես լիբերալիզմի քննադատ։

Դեմոկրատ հրապարակախոսը անդրադարձել է նաև կանանց լուսավորության և ազատագրության խնդրին։ Նրա մոտ հայ կնոջ ազատագրման հարցը միահյուսվում է ընդհանուր ժողովրդի քաղաքական ազատագրմանը և առաջադրվում այնպիսի արմատական տեսակետներ, որոնք ուղղակի համընկնում էին հայ ռևոլյուցիոն դեմոկրատիայի դափնեկիր Մ. Նալբանդյանի հայացքներին։

Մամուրյանը բողոքում է հայ կնոջ իրավունքը բռնաբարողների դեմ, պայքարում է «ապօրինի և բռնի ամուսնություններ» քարոզողների դեմ և պահանջում է փոխադարձ սիրո և համակրության վրա հիմնված ամուսնական ընտանիք ստեղծել։ Նա կնոջ բերանով հայտարարում է.

«Այս վիճակը չկրնար հարատևել, և եթե այսօր անձ մը կապստամբի բացե ի բաց անոր դեմ, քանիներ կհեծեն բանտի մեջ և առիթի մը կսպասեն որ ընդհանուր բողոք մը բառնան ամուսնական բռնության մը դեմ, որու հարակից են անհավատարմություն, բաժանում, մոլություն, մեր դատաստանական ատեանները մեծ մասամբ վրաղեցնող խնդիրներ»[3]։

Հրապարակախոսը կանանց բերանով խարազանում է այն ամուսնական կապերը, որոնք հենված են ոսկու և հարստության հիմքերի վրա, համալրելով դրանք իր դավանանքին դեմ, քանի որ փողով են ցանկանում «իմ ազատությունս գնել»[4]։

Համեմատություն անցկացնելով Արևելքի և Արևմուտքի կանանց բարքերի մեջ, առաջնությունը տալիս է առաջիններին, որոնց հոդու մեջ դեռևս չի սերմանվել «քաղաքակրթության ախտը» և կարող են «հավատարիմ սիրահարներ, առաքինի մայրեր, «ընտանեասեր տիկիններ» լինել, որտեղ «սերը բնական է և թե սիրույց հոգիներ իրարմե չեն զատվիր»[5]։

Պայքարելով Եվրոպայից արևելք ներթափանցող կեղծ քաղաքակրթության դեմ, հակառակ լինելով կանանց պճնվելուն, ավելորդ ֆրանսամոլությանը, որը այդ ժամանակ խիստ տարածված էր Թուրքիայում, Մամուրյանը առաջ է քաշում կնոջ դաստիարակության հարցը։

Դաստիարակված լուսավորյալ կինը ավելի առաքինի և հասարակության համար պիտանի մայր կարող է լինել, քան «ան աղջիկը որ կղպակի ու շրջ-

---

[1] «Արևելյան մամուլ», 1876, էջ 349—350։

[2] Նույն տեղում, էջ 350։ Տե՛ս նաև Վ. Պարսամյան «Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը», Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 11—12, 1944, էջ 54։

[3] Անգլիական նամակների, էջ 286։

[4] Նույն տեղում, էջ 27։

[5] Նույն տեղում, էջ 28։

թայի տակ կմաշի, կփտի և մինչև անոր խավարին բույնը մոլորությանը կսպրդի շատ անգամ, և այն դյուրին ճարակ, միամիտ որս կգտնե»[1]։

Մամուրյանը պայքարի է դուրս բերում հայ կնոջը, իր իրավունքները պաշտպանելու համար, որին պետք է օգնեն «արդարասեր գրիչներ» «և եթե անոնք ալ չօգնեն, բացեիբաց մեր ամուսիններուն զազրալի ընթացքին դեմ պետք եղած տեղը պիտի բողոքենք և մեր գլխին ճարը պիտի նայինք. որովհետև մեր տնային երջանկության հետ ազգային տունն ալ փլելու վրա է»[2]։

Կինը Մամուրյանի մոտ ոչ միայն գորովագութ մայր է, ազգի լուսավորության գործին նվիրված էակ, այլև կռվող, արիասիրտ, ազատագրական պայքարի դրոշի տակ գրված մի զինվոր։

Այս աշխատությունների և վերոհիշյալ հարցերի շարադրանքը կատարվում էր արևմտահայ մշակված աշխարհաբար լեզվով, որի հաղթանակի համար մեծ գործ կատարեց մարտական հրապարակախոսը։

Այսպիսով, 19-րդ դարի 60—70-ական թվականներին արևմտահայ իրականության մեջ ազգային ազատագրական պայքարի, սոցիալական բողոքի արտահայտության, կրոնի, եկեղեցու, ազգային սահմանադրության, լեզվի, կանանց ազատագրության մասին արտահայտած իր տեսակետներով և պրակտիկ պայքարով Մամուրյանը կանգնեց դեմոկրատական ինտելիգենցիայի շարքերում, պայքարելով մի կողմից թուրքական արյունկզակ տիրապետության, մյուս կողմից՝ ներքին ռեակցիոն պահպանողականների և լիբերալ բուրժուական գաղափարախոսների դեմ։

1870-ական թվականների վերջերից Մ. Մամուրյանի հայացքների մեջ զգալի չափով նկատվում է հետընթաց շարժում, նա թողնում է իր ռադիկալ հայացքները և հարում ռեֆորմիզմին։

Ազատագրական շարժման երբեմնի մարտական գաղափարախոսը 1878 թ. ձեռք մեկնելով ազգային պահպանողական գործիչներին, գրում էր. «...Նախ հայն արյուն չունի՝ վասնզի արդեն շատ թափած է իր կրոնին և ազգայնության համար, չէ թե պատերազմի դաշտին վրա, այլ իր քաղաքին, իր գյուղին, իր տան մեջ, ատեն ատեն կրած հարձակումներուն պատճառով, սակայն հառաջանալու համար բավական կենսական ուժ ունի»[3]։

Մ. Մամուրյանը իր գործունեության երկրորդ շրջանում հրաժարվում է նախկին արմատական պահանջներից և հարում է լիբերալիզմին։

---

1 Անգլիական նամականի, էջ 27։
2 Հայկական նամականի, էջ 94։
3 «Արևելյան մամուլ», մայիս, 1878, էջ 19։